եւ, առաջինից դէպի երկրորդը թափոելով, կազմում են հիանալի ջրվէժներ: Մի տան կտուրը միւս տան համար բակի տեղ է ծառայում, եւ այսպէս, լեռների կուրծքին կպած տները աստիճանաբար վեր են բարձրանում եւ հասնում են մինչեւ ամենաբարձր գագաթները: Իսկ վտակները, վերեւից հոսելով, ջրվէժների տեսարաններ են ներկայացնում: Ամէն կողմից ջուր է վազում, թէ աղքատին եւ թէ հարուստին բարիք է պարգեւում: Ջուրը անցնում է Ս. Սարգիս եկեղեցու աւագ խորանից եւ թափւում է նրա գաւիթը:

Գնում ես փողոցներով, յատակը քար, պատերը քար, ման ես գալիս պարտէզների մէջ, ցանկապատը քար, դռները քար, եւ այդ քարեղէն աշխարհը, արհեստի եւ բնութեան հրաշալիքների հետ միացած, սքանչացնում են քեզ: Դէպի որ կողմ եւ նայում ես, երեւում են ահաւորութիւն, վսեմութիւն, գեղեցիկ տեսարաններ: Նայում ես դէպի ցած, դէպի ձորի անդնդային խորութիւնը: Մի տուն միւս տան վրայ, մի պարտէզ միւս պարտէզի վրայ, աստիճանաբար իջնում են մինչեւ գետի ափերը, որ հոսում է ձորի խորութեան միջով: Իսկ այնտեղ, գետեզերքի բոլոր երկարութեամբ, տարածւում են քաղաքացիների այգիները եւ լցնում են ձորը հիանալի կանաչազարդութեամբ:

Նայելով այդ բոլորի վրայ, քո սիրտը բաբախում է մի վսեմ հպարտութեամբ, երբ տեսնում ես, թէ ինչպէ՜ս հայ մարդը գիտէ մաքառել վայրենի բնութեան հետ, գիտէ լեռների ապառաժոտ անձկութեան մէջ իր համար մի դրախտ ստեղծել:

Աւելի հետաքրքիր էր շուկան: Հրապարակը գտնւում էր կտուրների վրայ, իսկ կտուրների տակում՝ ծածկոած բազարը իր կրպակներով ու խանութներով: Չսովորած մարդու աչքում կարող էր այդ շատ օտարոտի երեւալ, եթէ չմտածէր, որ խնայող բաղեշցին, իր տեղի սղութեան պատճառով, աշխատել է նրա ամէն մի թիզից օգուտ քաղել: Ես ման էի գալիս կտուրների վրայ, այլ խօսքով, հրապարակում: Անցնելու տեղ չկար, մարդ, անասուն եւ թռչուն խառնոած էին միմեանց: Այնտեղ գիւղացի կանայք, խումբերով նստած, ձու, հաւ, սէր ու կարագ էին ծախում. այնտեղ կապած էին գիւղացիների աւանակները, որոնց վրայ բարձած, զանազան ուտեստներ էին բերել ծախելու. այնտեղ շարքով չոքած էր ուղտերի քարաւանը, որ գիւղերից ցորեան էր բերել. նրանց մօտ կիտած էր ցորեանի շեղջը: Այնտեղ ջուլհակը իր գործած կտաւն էր ծախում, իսկ ներկարարը՝ իր ներկած կարմիր շիլան. այնտեղ չիթսազը, իր պատրաստած չիթերը փոխում էր քուրդի հետ եւ նրանից իւղ, պանիր ու բուրդ էր առնում. այնտեղ թափառական չինգանան պար էր ածում իր կապիկը եւ փարաներ էր հաւաքում, իսկ քահանան մօտենում էր այս եւ այն ուտեստը ծախողին, մի պատառ վեր էր առնում, իր բերանն էր